ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ք. Սիսիան 04.09.2023թ.

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2023-2027 թվականի

հնգամյա զարգացման ծրագրի վերաբերյալ հանրային լսումներ

2023 թվականի սեպտեմբերի 4-ին ժամը 11:00-ին Սիսիանի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ Սիսիան խոշորացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրին վերաբերող հանրային լսումներ: Հանրային լսումն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակից Գ. Սրապյանը: Հանրային լսումներին մասնակցում էին համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարներ, ավագանու անդամներ, համայնքային կառույցների ղեկավարներ, համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, համայնքի բնակիչներ: Հնգամյա զարգացման ծրագիրը ներկայացրեցին Զարգացման ծրագրերի, տուրիզմի, առևտրի, սպասարկման և գովազդի բաժնի պետ Ե. Եղիազարյանը, բաժնի առաջատար մասնագետ Գ. Ասատրյանը: Հնգամյա ծրագիրը ներկայացնելուց հետո եղան քննարկումներ, լսվեցին կարծիքներ, արվեցին առաջարկություններ: Իրենց առաջարկություններով հանդես եկան բնակավայրերի վարչական ղեկավարներ Դ. Նավասարդյանը, Ա. Ավետիսյանը, Գ. Օհանյանը, Մ. Մարգարյանը, Մ. Պետրոսյանը: Ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Ա. Հակոբջանյանը, համայնքի ղեկավարի տեղակալներ Գ. Հակոբյանը, Կ. Հովհաննիսյանը: Ներկաները հավանության արժանացրին Սիսիան համայնքի ղեկավարի կողմից առաջարկված հնգամյա զարգացման պլանը և համայնքի ղեկավար Ա. Հակոբջանյանը առաջարկեց նախագիծը ներկայացնել համայնքի ավագանու հաստատմանը:

Արձանագրեց՝

Համայնքապետարանի աշխատակից՝ Գ. Սրապյանը